

# ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

## Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2017 թվականի  
դեկտեմբերի 21-ին

### «ՀԱՐԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** «Հարկային ծառայության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2002 թվականի սեպտեմբերի 14-ի ՀՕ-5 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 19-րդ հոդվածի 4-րդ մասում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վարչապետի ներկայացմամբ» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության Նախագահը» բառերով, իսկ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վարչապետը՝ հարկային մարմնի ղեկավարի ներկայացմամբ» բառերը՝ «Արցախի Հանրապետության կառավարությունը» բառերով:

**Հոդված 2.** Օրենքի 22-րդ հոդվածի 3-րդ մասում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վարչապետի ներկայացմամբ» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության Նախագահը» բառերով:

**Հոդված 3.** Օրենքի 24-րդ հոդվածի 8-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«8. «Արցախի Հանրապետության օրինակելի հարկային ծառայող» կրճքանշանով պարգևատրումն իրականացնում է հարկային ծառայողին տվյալ պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը (մարմինը):»:

**Հոդված 4.** Օրենքի տեքստում «Լեռնային Ղարաբաղի» բառերը փոխարինել «Արցախի» բառով, բացառությամբ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի», ««Պետական պաշտոններ զբաղեցնող

անձանց վարձատրության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսգրքով», ««Դրամարկղային գործառնությունների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության» և ««Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հարկային պետական վարչության աշխատողների դասային և հատուկ կոչումներ սահմանելու մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության» բառերում:

**Հոդված 5.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունվարի 1-ից:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ**

**Բ. ՍԱՀԱԿՅԱՆ**

2017թ. դեկտեմբերի 28  
Ստեփանակերտ  
ՀՕ-86-Ն